

# ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը հյուրընկալել է ֆրանսիահայ բարերար Օհան Հեքիմյանին

31.05.2017



Այսօր ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը հյուրընկալեց ֆրանսահայ բարերար Օհան Հեքիմյանին, ՀՀ արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ Սամվել Լալայանին, ֆրանսիահայ գործարար Ժակ Հակոբ Ղազարյանին: Հանդիպմանը ներկա էին մարզպետի խորհրդականը և Արենի համայնքի ղեկավարը:

Նշենք, որ այս փոխայցելությունը կայացավ Արենի և Բանդոլ քույր քաղաքների համագործակցության հաստատման շրջանակներում:

ՀՀ Վայոց ձորի պատվիրակությունը պաշտոնական այցով մարտի 24-ից 28-ը գտնվում էր Ֆրանսիայի Հանրապետության Բանդոլ քաղաքում: Պատվիրակության կազմում ընդգրկված էին ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդական Վասիլ Ասլանյանը և ՀՀ Վայոց ձորի Արենի համայնքի ղեկավար Բաֆֆի Խաչատրյանը:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը, ողջունելով հյուրերին, շնորհակալություն հայտնեց Բանդոլ քաղաքում Վայոց ձորի պատվիրակությանը հյուրընկալելու և համագործակցություն հաստատելու պատրաստակամության համար:

Սամվել Լալայանը նշեց, որ ֆրանսահայ բարերար Օհան Հեքիմյանը հանդիսանում է «Սուրբ Լազար ուխտի ասպետ»։ Ֆրանսիաում այս կոչմանն են արժանանում երկար տարիներ բարեգործությամբ աչքի ընկած անձիք: Հարկ է նշել, որ Օ. Հեքիմյանի շնորհիվ է, որ Արենի և Բանդոլ քաղաքները դարձել են քույր քաղաքներ և ներկայումս նախանշվում են համագործակցության նոր եզրեր և ուղիներ: Օ. Հեքիմյանը Հայաստանում բարեգործությունը սկսել է դեռևս 90-ական թվականներին, գործունեություն ծավալելով հիմնականում առողջապահության ոլորտում և շարունակում է մինչ օրս:

Խոսելով համատեղ ծրագրերի մասին, մարզի ղեկավարը նշեց. «Պատահական չէ, որ Արենի և Բանդոլ քաղաքները քույր քաղաքներ են դարձել: Այս երկու համայնքները հայտնի են իրենց գինեգործությամբ և խաղողագործությամբ: Հայտնի է, որ Վայոց ձորը գյուղատնտեսական մարզ է և այս ոլորտում համագործակցության համար հիանալի հնարավորություններ կան»:

Օ. Հեքիմյանն իր հերթին կարևորեց նաև այն փաստը, որ անհրաժեշտ է համագործակցության շրջանակներում կազմակերպել գինեգործների և ոլորտի մասնագետների փոխայցելություններ՝ փորձի փոխանակման, մասնագիտական նորությունների և նորագույն տեխնոլոգիաների հետ ծանոթանալու նպատակով:

Նշենք, որ Բանդոլ քաղաքում գործում են խաղողագործական և գինեգործական մեծ կոոպերատիվներ:

Մարգարետ Հ. Մարգարյանն ասաց, որ ներկայումս մարզում ավելի մեծ ինտեսիվությամբ են հիմնվում խաղողի այգիները, որտեղ կիրառվում է կաթիլային ոռոգում: <<Բացի գյուղատնտեսությունից Վայոց ձորի մարզն ունի նաև զբոսաշրջության զարգացման մեծ ներուժ: Մարզն ունի 1300-ից ավելի պատմամշակութային կոթողներ: Այստեղ հարկավոր են լավ և հեռանկարային ներդրումներ:>>,- նշեց Հ. Մարգարյանը: